

# ԲԱՐԵԳՈՐԾ

BAREGORTS, Հոկտեմբեր, 2013, թիվ 22, ԲԱՐԵԳՈՐԾ

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԲԱՆԱԹՍԻ ԲԱԶԱՐԱՎԱԿԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ԵՌԱՄՍՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՂ

Տիրոջը կարուտող Հայրենի պատմամշակութային հուշարձաններ



Աղթամարի Սուրբ Խաչի համապատկերի արևելյան մասը 2013 թ.

Ամիկ Արուղամրենց Ս. Գրիգոր Եկեղեցին կարծես ուզում են

նորոգել

## ԱՍՍՈՒՆՔԻ ՀԱՍԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓԱՌԱՏՈՆՉ ՇՈՒՇԻՈՒՄ

Գեղարվեստական խոսքի հմայքը և ներգործուն ուժը թերևս միայն երաժշտության հետ է համեմատելի: Դժվարին է բազմաթիվ նրբություններ պարունակող խոսքարվեստը, որը դրսենորվում է որպես ասմունքողի և ունկնդրի անմիջական հաղորդակցություն: Իսկ պատկերավոր խոսքի ընկալման, վերարտադրման արվեստում շատ քչերն են հաջողության հասնում: Մինչդեռ խոսքարվեստն այսօր առավել քան անհրաժեշտ է ոչ միայն որպես մեր ուսկեղենիկ մայրենիկ գեղեցկությունները վերհանելու և ինքնարտահայտման հնարավորություն, այլև որպես բանաստեղծության խորքում ամբարված հոգեմտավոր էությունը բացահայտող միջոց, հայեցի բնավորություն ու մտածողություն ձևավորող ազգային բացահայտություն: Այս գիտակցությամբ են սփյուռքահայ բարերարներ Ալեք Բաղդասարյանն ու Նիկ Քանյանը «Գուղգեն Մելիքյանի Քաշարաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» աշակցությամբ, Սարգիս Գալստյանի համակարգումով Շուշիում կազմակերպում ասմունքի համահայկական երկրորդ փառատոնը՝ այս անգամ Երևանի Վ.

Տերյանի, Սիամանթոյի, Վ. Թեքեյանի, Հր. Մաթևոսյանի անվան դպրոցների, Զավախսի՝ Ախալքալաքի և Ախալցխայի շրջանների, Իրանի Թեհրան քաղաքի և Արցախի Հանրապետության շրջանների կրտսեր, միջին և ավագ տարիքային խմբերի 90-ից ավելի աշակերտների և նրանց ուղեկցող ուսուցիչների մասնակցությամբ: Մեծ խորհուրդ ուներ փառատոնի՝ Վերածնության ուղին թռնած Շուշիում անցկացումը, մանավանդ որ Արցախում այս պատանիների մեջ են փնտրում իրենց թատրոնի և բեմարվեստի ապագա դերասանական ուժերին: Հայոց երթեմնի մշակութային կենտրոն Շուշիում այն տեղի ունեցավ օգոստոսի 5 – 9-ը, 7-ին կազմակերպվեց ուղևորություն դեպի Տիգրանակերտ ու Գանձասար, իսկ 8-ին Շուշիի Խ. Արովյանի անվան դպրոցում հաղթողների մրցանակներն ու պարզեները հանդիսավորությամբ հանձնելուց հետո նրանց և գնահատող հանձնախմբի արվեստագետ անդամների ուժերով կայացավ եզրափակիչ ճոխ համերգ:

Փառատոնի գնահատող հանձնախմբի կազմում էին վաստակավոր դերասանուի, միջազգային փառատոնների դափնեկիր, պրոֆ. Լ. Մնացականյանը, թատրոնի և կինոյի ինստիտուտի դասախոս, միջազգային մրցույթների դափնեկիր, ասմունքող Ա. Հերեցյանը, Երգիչ, ԼՂՀ Վաստակավոր արտիստ Տ. Մկրտչյանը, ԵՊՀ հայ բանավորության ֆակուլտետի դեկան, բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Արծրուն Ավագյանը, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան, «Քաջարադի բազմագավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրեն, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը, ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ, բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Ս. Մուրադյանը, Արցախի գիտության և կրթության նախարարության աշխատակիցներ Ժ. Ավագյանը, Ե. Միրզոյանը, Ի. Հովհաննիսյանը: Նախքան փառատոնի սկսվելը՝ կայացավ թուրիկ հավաք, ուր ուղեկցող ուսուցիչները ծանոթացան միմյանց ու գնահատող հանձնախմբին: Նախագահ պրոֆ. Ա. Ավագյանը, Արցախի ԿԳ նախարար պրն Ասրյանը ընդգծեցին փառատոնի նշանակությունը, բացատրեցին մրցույթի կարգն ու պայմանները: Բոլորը հավաստիացան, որ հանձնախումբը գործելու է բացարձակ անաշառությամբ և իրական լավագույններին ներկայացնելով: Երկու օր շարունակ հյուրանոցի մեջ սրահում հնչում էր հայ դասական ու ժամանակակից հեղինակների բանաստեղծական խոսքը, լեկ-լեցուն դահլիճում ներկաներն զնայլվեցին երևանցի, ջավախիցի, իրանցի ու արցախեցի հայ երեխաների մատուցած գեղարվեստական խոսքով, ըմբուշնեցին Սայաթ-Նովայի, Խ. Արովյանի, Հ. Թումանյանի, Սիամանթոյի, Վ. Թեքեյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Հ. Շիրազի, Պ. Սևակի, Հ. Սահյանի և ուրիշների ստեղծագործությունները, ապրեցին հուզումնալից պահեր, հիացան հոյակապ ասմունքով, որ հնչում էր հայ պատանիների և աղջկների շուրթերից:

Ավարտվեց փառատոնը: Լավեր շատ էին, հաղթողները՝ քիչ, սակայն պարտվոր չկար: Ամենից դժվար վիճակում էր գնահատող հանձնախումբը, որն ընտրություն ախտի կատարեր լավերի ու լավագույնների միջև: Փառատունում ամենից ուժեղ իրենց դրսերեցին իրոք լավ պատրաստված իրանցի երեխաները, որոնք շահեցին փառատոնի և «Ամերիա» բանկի գլխավոր մրցանակները և իրենց փայլուն կատարումներով մի առանձին շուրջ հաղորդեցին այդ համահյական միջոցարձանը: Արցախի մշակույթի նախարարության և Շուշիի քաղաքապետարանի պատվորերին արժանացան նաև բարերար կազմակերպիչներ Ալեք Բաղդասարյանն ու Նիկ Քանյանը: Տարիքային 1-ին խմբում հաղթողներ ձանաչեցին 3-րդ տեղը գրաված Լիլիթ Գաբրիելյան (Զավախս) և Ալիկ Արքահամյանը (Երևան), 2-րդ խմբում՝ Մարիա Ասատրյանը (Երևան) և Լիլիթ Ավետիսյանը (Շուշի), 3-րդ խմբում՝ Սիմիան Սիմիանյանը (Թեհրան) և Արծրունի Ստեփանյանը (Ստեփանակերտ), 2-րդ տեղը գրավեցին Մանյա Աղամյանը (Բերձոր) և Արաքսյա Նազարյանը (Երևան), Անի Հարությունյանը (Ստեփանակերտ) և Մարինա Շամիրյանը (Թեհրան), իսկ 1-ին տեղը նվաճեցին Էմմա Ալեքսանյանը (Երևան), Մայիս Խոկանդարյանը (Երևան) և Փունի Հովհաննիսյանը (Թեհրան), իսկ Հասմիկ Բարսեղյանն ստացավ հատուկ մրցանակ:



Փառատոնի մասնակիցները Արցախում շրջագայելիս. Գանձասարի Ճանապարհին՝ ազերիներից գրաված տանկի մոտ  
**ՄԵՐ ԱՎԱԳ ԲԱՐԵԳՈՐԾՈ**

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՅ ՀԱԿՈԲ ԱԼԹԻԲԱՐՄԱՔՅԱՆ ՀԱՅԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՏԵՍԱԿԻ ՀԵՏ



Թղթակի՞ – Միրելի՛ Հակոբ Ալթիբարմաքյան, մեր տպավորիչ ուղևորությունը, Ձեր բարեգործությունը: Չի մոռաց-ավագ բարեգործ, բարով եք եկել: Ուրախ եմ կրկին Ձեզ վել եկեղեցու սպասավորի բազմազավակ կնոջ հանդեպ Հայաստանում տեսնելով: Ձեմ մոռացել 2009 թ. մեր հան- տիկին Մարիի Վերաբերմունքը, մանավանդ որ արդեն յոթ դիպումը Գուրգեն Մելիքյանի, Ձեր ազնվակիայի տիկնոց՝ Երեխա ծնած և ութերորդով հղի այդ կինն ասաց՝ իններորդը Մարիի հետ միասին մեր ուղևորությունը դեպի Արցախ ու Հայկագն է լինելու: Նա իրենց տուն հրավիրեց, Ձեր տիկինը, Ծիծեռնավանք, տեղի՝ 4-րդ դարի Ս. Գևորգ եկեղեցին թե- տեսնելով տարբեր ամսյումներից, պատուհաններից, ժառարողան Նաջարյանի և Ձեր միջոցներով վերանորոգելուց հե- բների հետևից ծիկրակող ամաչկոտ ծագուկներին, նրան տո դրվելիք խաչքարի տեղը ճշգրտելու նպատակով: «Բա- նվիրեց իր պայուսակի ամբողջ պարունակությունը՝ դրամը, բեգործ» նախորդ համարներից մեկում լուսաբանվել է այդ զարդեղենը, պերճանքի պարագաները (Միջամտում է Գ.

**ՍԵԼԻՋԱՆԾ.-** Այս անգամ էլ տվյալը, ամուսնուց անկախ, կայսրությունը, թեև 80 միլիոնի է մոտենում նրա բնակչությանը դրամ է նվիրել): Միրելի՝ Հակոբ, այս անգամ ծեր թյունը: Ի՞նչ եք կարծում, այս ամենի մեջ մենք չունե՞նք մեղքի այցելույթունը նո՞յն նպատակն ունի, թե՞ շարունակությունն է մեր բաժինը:

**Հ. ԱԼԹ.** – Նպատակը նոյնն է կամ նախորդների շարունակությունը: Մեր արձակուրդը ավելի սիրում ենք անցկացնել Հայաստանում՝ մեր ազգային հողի վրա, մեր պետության հովանու ներքո, մեր հարազատների շրջապատում: Ամեն տարի Զեր հիմնադրամին կամոնավորապես նվիրատվություն անում եմ, սակայն նախորդ տարի նվիրածն գումարը պակաս էր. 500 եվրո պարտը էի մնացել. շատ էի անհանգիստ: Այս տարի անձանք եկել եմ լրացնելու և պարտք մարելու, որովհետև կը խորհիմ, թե դրա պատճառով մի կարևոր բան հանկարծ թերի մնացած կլինի: Չպիտի մոռանաք, որ Հայաստանի մեջ ամեն բան, ամեն սինվոլ մեզի համար կարևոր արժեք է:

**ԹՂԹ.** – **Մենք աստիճանական փոփոխությունները դժվար ենք նկատում:** Ի տարբերություն մեզ՝ հիմա Դուք Հայաստանը տեսնում եք 4 տարիների հեռավորությունց. Ի՞նչ փոփոխություն եք տեսնու:

**Հ. ԱԼԹ.** – Նորանկախ պետություն է Երկրաշարժի և պատերազմի տխուր հետևանքներով: Ղժվարությունները շատ են, բայց անհաղթահարելի չեն, կամաց-կամաց ամեն ինչ կլավանա: Մենք դրսից դիտող ենք ու ու ներսից հրձվող, տեղացիներից ավելի շատ բան կը տեսնինք: Երբ շրջում ենք Երևանի փողոցներով, փոփոխություններն ակնառու են. մարդոց հագուկապը, բարեկիրթ կենցաղավարումը, այգիների, պուրակների մաքրությունը, անշուշտ, առաջնորդացի արդյունք են: Երևանը հաճելի, գեղեցիկ քաղաք է: Ուրախությամբ իմացա, որ հայ մարդոց ինտեռնետ կազմ 95 % է, Եվրապա՝ Փարիզ, 4 - 5 տարի առաջ 70 % էր, իմա թող զլլա 90 %: Ասիկա բարձր ցուցանիշ է: Մենք Եվրոպային վար չենք: Հոն ալ դժգոհություններ շատ կան: Քննադատությունը ընդունելի է, եթե առողջ է, սակայն պետք չէ ամեն երկրորդական, չնշին բանի համար պետությանը քննադատել: Ֆինանսական ու այլայլ դժգարությունները շուտով կը հաղթահարվին:

**Գ. ՄԵԼԻՔՅԱՆ (Միջամտում է)** – Միրում եմ մարդու այս տեսակը, այս առողջ մտածելակերպը: Իրոք պետք չէ ամեն դատարկ, երկրորդական բանի համար քննադատել ու թույլացնել մեր պետականության հիմքերը: Հակոբ Ակիթիքարմաքյան հայի համար ամեն ինչ Հայաստանով է չափվում. Վ. Կո-Սարոյանի «Ուր որ երթաս Հայաստան պոռա» նշանաբանի արժեքը ամենից լավ նա է հասկացել:

**ԹՂԹ.** – Նոր եմ վերադարձել Արևմտյան Հայաստան և նվիրատվությունների մեջ Ձեր չափարաժինն ամենամեծերից Կիլիկիա կատարած ուղևորություն-ուխտագնացությունց: Է, որի համար Ձեզ և Ձեր և ազնվակայիլ տիկնողը շնորհա-Տեսա հայոց երենմի հղորության խորհրդանշները՝ Կարսի, կալություն եմ հայտնում մեր հոգաբարձուների խորհրդի և Անիի, Վանի, Բայազետի Կորհկոսի, Սըսի, Անարզարայի բերդերն ու բերդապատճենները, որոնց ուղեցույց-ցուցանակ-

կայսրությունը, թեև 80 միլիոնի է մոտենում նրա բնակչությանը դրամ է նվիրել): Միրելի՝ Հակոբ, այս ամենի մեջ մենք չունե՞նք մեղքի այցելույթունը նոյն նպատակն ունի, թե՞ շարունակությունն է մեր բաժինը:

**Հ. ԱԼԹ.** – Ներում եմ հայցում դաշնացած խոսելուս համար: Ունենք և մեծ բաժին, ցավոք: Մեր անմիաբանությունը, օտարաշիրությունը, մեր հայրենիքը չարժենորելու, ստեղծածն ու ունեցած ծիշտ զննահատելու մոլորությունը, «Ուրտեղ հաց՝ այստեղ կաց» մուրացկանի ողորմելի վարդապետությունը: Վերջերս Ֆրանսիա դարաբացիներ մոտեցան ինձի և ըսին, թե նեղության մեջ հայտնված խեղած մարդիկ ենք, օգնեք մեզ: Ես ալ ըսի իրենց՝ դուք խեղած չեք, դուք երրու եք, մի պատահապատագրած ու օտարացումից փրկած հաղթող ժողովուրդ եք, ատոր համար ձեզի պիտի օգնեմ:

**ԹՂԹ.** – Եղեռնի հետևանքով է արևմտահյությունը հայրենազրկվել ու աշխարհի լայնքով ու երկանքով ձևավորել հայկական սիյուռքը: Այսօր Ձեզ չի մտահոգում արտագաղթը Հայաստանից:

**Հ. ԱԼԹ.** – Ամենեն ցավոտ խնդիրներեն մեկն է այսօր: Եվրոպա և այլ երկրներ արտագաղթող հայերը կը կարծեն, թե երկի դուրս ավելի լավ է, կրնան դյուրությամբ դրամ շահի, հարստանալ, ինքնահաստատվիլ: Սակայն սփյուռքի պատմությունն ու ներկա վիճակը աչքերն առջև ենք է. Երկու-Երեք սերունդ, 50 տարի, օտար միջավայրը ծովարան է մանականդ խանամությունների հետևանքով: Ինքը քեզ և զավակների կորսնցնելու գնով չարժե լքել հայրենիքը: Սանականդ որ այսօրվան սփյուռքը տկար է, թույլ, իսկ մեծ տերություններից մեծ սպասելիք պետք չէ ունենալ, անոնց մարդաբարձրությունն ու մեծահոգությունը չնչին բաներով կարտահայտվին միայն: Հայենիքի մեջ ամրանալն ու հայրենի պետականությունը հղորացնելն է ձիշտ ձանապարհը:

**ԹՂԹ.** – **Մեծ Եղեռնի 100-ամյակն է մոտենում. այս առթիվ Ձեր մտորումները:**

**ԱԼԹ.** – Դա էլ մեր ազգային մեծ ողբերգության ցավալի տարելիցն է: Կը խորհիմ, թե Երևանի կենտրոնն է կենտրոնական հրապարակի վրա, Եղեռնի տպավորիչ, խորհրդանշական հուշարձան մը պետք է կանգնեցնել, որովհետև բոլոր Հայաստան և Երևան Եկողները չեն, որ կրնան երթալ Ծիծեռնակաբերությունը:

**ՊԵՏՐԸ** է զորացնել հայոց պահաջատիրությունը, գոնեայնքան, որ հասնենք Արցախի խնդրի արդարացի լուծման որպես փոխառուցում հայոց անցյալի ողբերգական կուտանքների և մեր ժողովորդի կրած չարչարանքների:

**ԹՂԹ.** – Դուք մեր հիմնադրամի մեծ բարեկամն եք, և նվիրատվությունների մեջ Ձեր չափարաժինն ամենամեծերից Կիլիկիա կատարած ուղևորություն-ուխտագնացությունց: Է, որի համար Ձեզ և Ձեր և ազնվակայիլ տիկնողը շնորհա-Տեսա հայոց երենմի հղորության խորհրդանշները՝ Կարսի, կալություն եմ հայտնում մեր հոգաբարձուների խորհրդի և Անիի, Վանի, Բայազետի Կորհկոսի, Սըսի, Անարզարայի բերդերն ու բերդապատճենները, որոնց ուղեցույց-ցուցանակ-

կայսրությունը, թեև 80 միլիոնի է մոտենում նրա բնակչությանը դրամ է նվիրել): Կուրապես համոզված եմ սա Ձեր վերջին այցելությունը չէ, ներին կառուցող տերերի փոխարեն նվազող ալիքավանների և Դուք նորից եք Հայաստան զալու, որովհետև կարծում եք՝ և այլ սեղուկ-թուրքերի անուններ են, իսկ նրանց գլխին Ձեր արածը քիչ է և Դուք ավելի շատ եք պարտք, որովհետև թուրքական դրոշ է ծածանվում: Ազկիթի վերածված Կարսի գիտեք նաև, թե ինչ մտահոգություններ ունենք, և Հայաստան եկեղեցին, օրինակ, ներկայացված է որպես 10-րդ տարում ու Արցախում ինչ խնդիրներ են լուծվում Ձեր և մյուս դարի սեղուկյան կառուց: Հասկանալի է, որ թշնամու կոպիտ կայսր այցելության վերադարձը նվիրաբերած գումարներով:

**Հ. ԱԼԹ.** – Իրոք այդպես է: Կուրախնամ, որ ձիշտ եք պատճառված ապատառով և մեր պատմական տարածքում ստեղծվել թուրքությունը: Անշուշտ, նորեն քական ընդարձակ ու մեծ մասով համարյա անքանակ պիտի գամ և քանի անգամներ: Միշտ պիտի գամ, որպեսզի

Արցախի հետ միասին ավելի շենացած տեսնեմ մեծ Հայոց մասնակտությունը, որպեսզի հայրենաբնակ հայությանը տեսնեմ շատ ավելի բարեկեցիկ ու հոգսերի բեռջ՝ թեթև ու տանելի:

Հայը միայն հայրենիքի մեջ կրնա ապահով վիճակ և լիարժեք երջանկություն ունենալ:

Թղթակից

## ՄԵՐ ՓՈՔՐԻԿ ԲԱՐԵԳՈՐԾՈ

### ՆԱՍԱԿ ՀՈԼԱՆԴԻԱՅԻՑԻ



Հեռավոր Հոլանդիայում բնակվող իննամյա Մարիամ Ավագանը, իմանալով մեր հիմնադրամի գործունեության և հատկապես «Կովեր» ծրագրի մասին և գիտակցելով Արցախի Քաջարադի շրջանում բազմազավակ ընտանիքներին օգնությամ ամրաթեշտությունը, ինքն էլ քաջալերվել է մեծերի օրինակով և որոշել է անձամբ մասնակցել բարեգործության: Ահա այս ծրարով, որի երեսին իր անվարժ ծեռորդ նա պատկերել է կարճատու կով և նրա շուրջ աշխույժ թռվացցող երեխաներ, բնակելի տուն՝ գործող ծխնելույզով, որ Արցախի ու Հայաստանի հարատևությունն են խորհրդանշում, մեզ է ուղարկել մեկ կովի արժեք... Ուրեմն՝ բարեգործությունը միայն մեծերի մենաշնորհը չէ, և նոր սերունդն էլ, աշխարհի որ ծայրում էլ որ լինի, ջանում է հնար ու միշոց գտնել:

**ՄԵՂԱԿԻ ՀԵՌՈՎԱԾ ՄԵՐ ՍԻՐԵԼԻՆԵՐԾ**

Անեղալ հայորդիներին որևէ կերպ օգտակար լինելու:

Այս հուզիչ իրողությունը հավաստում է, որ բարեգործությունը շարունակական է և պարտավորեցնում է շնորհակալություն հայտնել նրա ծնողներին այդպիսի օրինակելի հայուի դաստիարակելու համար:

Երբ այս ծրարը տեսավ բանասիրության դոկտոր Սարգսի Միջթարյանը, նրա մեջ արթնացավ ննջող բանաստեղծը և անմիջական տպավորությամբ գրեց հետևյալ քերթակը, որը սիրով ներկայացնում ենք ընթերցողին:

### ՀՈԼԱՆԴԻԱԾԻ ՄԱՆԱԿԻԿԻ, ՆՐԱ ԵՐԱԳԱԾ ԿՈՎԻԿԻ և ԲԵՐՃՈՐԻ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայրիկն ըշտապում էր:

Ծրարն ուղարկել էր այեսք «Մելիքյան» հիմնադրամին: Մարիամիկն այնքան էր մեծ, Որ կամենում էր ինքն էլ Մի բարի գործ կատարել բարի, Որ արցախի մանուկները ժապտուն նայեն աշխարհին...

Երբ հայրիկը, ծրարը մոռացած, Հարկավոր հասցեն էր փնտրում, Փոքրիկը մի կով գծնեց ծրարին՝ Շուրջը՝ թռվացող երեխաներ իրենց ծխացող տան բակում:

Ուզում էր ինքնաթիռ նկարի,

Ու ծրարը շուտ տեղ հասնի,

Ու արցախից երեխաները

Կովիկ ու կարիկ ունենան,

Խմեն ու արագ մեծանան,

Ու հավետ ապրի Արցախն

Ու տունը խաղաղ ծխա:

Հայրիկը բարկացավ մի պահ.

Դատրիկը հասցեի տեղ չէր թողել:

«Ոչինչ,- մտածեց,- մարդիկ

Կընքրնեն,

Ու սրտանց ենք կամենում օգնել»:

Ծրարեց քիչ մեծ ծրարով,

Ու գրեց հասցեն՝ «Արցախ,

Բերճորի երեխաներին:

Սրտագին նվեր Մարիամից»:

Ծրարը փակեց նա ժպտուն

Ու դատերն ուղարկեց փոստատուն:

Ցնծում էր փոքրիկն ու իրձվում.

Հեռավոր քրոջ կամ եղբոր

Իր հոգին էր կարծես ուղարկում

Ու ժպտում էր արևի պես բոբր:

Բերճորի մանուկներն իհմա

Ավելի ապահով կլինեն,

Վիրավոր Արցախը շուտով

Կիառնի, առողջ, կենալի,

Եվ գալիք ամռանն ինքը

Նոր ընկերներին կայցելի:

ՍԱՐԳԻՍ ՄԱՒԹԱԿՅԱՆ

### ԴՈԿՏՈՐ ՆԱԶԵԼԻ ՉԱՐՉՅԱՆ



1949 – 2013

Ցավով իմացանք, որ ս/թ հունվարի 30-ին 64 տարեկանում մեզնից անդառ հեռացել է թանկ ու սիրելի մի անհատկանություն՝ ազգանվեր հայուիի, վաստակաշատ ու հեղինակավոր բժիշկ Նազելի Չարչյանը: Արմատներով հաշընցի այդ հրաշալի հայուիու մարդկային արժանիքները մի պարզ թվարկումով չեն սպառվի: Անզուգական մայր էր ու հավատարիմ ամուսին, վստահելի ընկեր ու հարեհաս բարեկամ, կարեկից սիրու ու բարեգործությունների նախաձեռնող: Նա շատ էր նման մեր էպոսի Ծովինար հերոսուհուն, որ հանուն Հայաստան երկրի համան առավ ամենամեծ զոհողությունները:

Նրանց ընտանիքը 1970 թ. Հայաստանից մեկնեց Արգենտինա, սակայն Նազելին խիզախտեց մնալ Երևանում և ուսումը շարունակեց պետական բժշկական ինստիտուտում ու հիմնարարական երրումով ստացավ բժշկի վկայական:

Ուսանողության շրջանում ճակատագրով ընտրվեց հոգեկից ու գաղափարակից ամուսինը՝ նոյնպես բժիշկ Դեյվիդ Չարչյանը: Ամուսիններով 1980 թ.

մեկնեցին ԱՄՆ, որտեղ բժշկական գործունեություն ծավալելու համար հարկադրված եղավ հաղթահարել լեզվական դժվարություններն ու, զավակների խընամքին զուգահեռ, նորից սովորել ու ծերք բերել բժշկի նոր վկայական:

Մարդկային ու մասնագիտական հեղինակությունը դյուրությամբ չեն վաստակում: Գլենդելի «Սեմորիալ» հիվանդանոցում բժիշկ Ն. Չարչյանը սպասարկեց տասնյակ հազարավոր հիվանդների՝ դրսորելով իր մասնագիտական հմտություններն ու մարդկային բարձր որակները: Համայնքի անկերծ սիրուն ու վստահությանը արժանանալուն նպաստեց և այն, որ Նազելին շուրջ երկու տարի պարբերաբար հեռուստատեսությամբ մատուցեց բժշկական անվճար խորհրդատվություն տեղի հանդությանը:

Հասունացել էր հանրային մեծ ծեռնարկումների համար: Ուղանությունով հայ բժշկուիին միսրձված էր հայահոծ զաղութի հայ կյանքի մեջ և անձանձի ծառայում էր նրա օրգաստորեական պետքերին: Հայերեն չիմացող, հայոց պատմության ու մշակույթին անտեղյակ օտարախոս հայերի համար նա Գլենդելի Երիտասարդ քիմիոնյանների (UCLA) տղամարդկանց մասնաճյուղի շրջանակներում հիմնեց անվճար շաբաթօրյա վարժարան, որն արդեն ունի 1000-ի չափ շրջանավարտ: Մրան զուգահեռ՝ 2005 թ. նա Կալիֆորնիայի համալսարանի Լու Անջելեսի մասնաճյուղում հիմնեց «Հայոց լեզվի և մշակույթի բարեկամներ» կառույցը, որը ծառայում է մեր լեզվի ու մշակույթի տարածնանը: Հաշընցո զավակը երթեկ անտարբեր չի եղել իր եղերաբախտ ու հերոսատիպ հայրենակիցների հանդեպ: Նա նոյն ժամանակներուն անդանակցում է Հաշընի հայրենակցական միության վարչությանը և Հայաստան է մեկնում Նոր Հազընում իր նպաստը բերելու տեղի վարժարաններից մեկի վերանորոգման աշխատանքներին: Սակայն դոկտոր Ն. Չարչյանի հայրենանվեր գործունեության մեջ առանձնակի կարևորություն ունի դոկտոր Քերոլան Նաջարյանի՝ Արցախում հիմնած «Արփեն» կենտրոնի երկվորյակը՝ 2005 թվականից նրան զու-

գահեր գործող «Անահիտ» հիմնադրամը՝ որի նպատակն է պայքարել Հայաստանի գյուղական վայրերում բնակչության թվի նվազման դեմ:

Իրոք առանձնակի կարևորություն է ստանում այս հիմնադրամի գործունեությունը, որովհետև նրա նշանաբանն է «1, 5 միլիոն զոհերի դիմաց 1, 5 միլիոն հայ երեխանների ծնունդ»: Հատուցման ազնիվ կարգախոս, որի արդյունքները շոշափելի են: Դոկտոր Նազելի Չարչյանի նախագահության ընթացքում Այս կարգախոսը գործնականի է վերածվել Հայաստանի Թալինի և Մարալիկի շրջաններում հիյ մայրերին սատարելով և ավելի քան 2000 հայ երեխանների ծննդյանն աջակցելով.

Այնքան արգասավոր ու մարդասիրական էր դոկտոր Նազելի Չարչյանի գործունեությունը, որ նա արժանավորապես մեծարվել է ԱՄՆ Կոնգրեսի, Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանի, Լոս Անջելեսի տարածաշրջանի վարչակազմի ու մանավանդ Գլենդելի քաղաքապետարանի կողմից: Նա արժանացել է նաև Ամերիկահայ բժշկական ընկերակցության «Նախագահի դեկավարման մրցանակին»:

Բարեգործ լինելը բարձրագույն պատիվ է: Քչերն են դա գիտակցում: Իր գիտակցական կյանքում «անանձնական ուրախությամբ» ապրած ազգանվեր ու ազնվակայի հայուիին՝ դոկտոր Նազելի Չարչյանը, իր տիխարարի մահն անզան ջանացել է ծառայեցնել՝ ազգօգուտ նըպատակի: Երկրային հրամանաշխատ էր գործունեությունը և բոլոր մերձակորներին ու կազմակերպություններին իր մահվան առթիվ պատվիրավելիք ծաղկեապակների գումարը փոխանցել միայն «Անահիտ» հիմնադրամի հաշվին:

Ահա մի ազգանվեր հայուիի, որին անձնական փառքն ու հարստությունը կարծես երբեք չեն հետաքրքրել: Հայուիի, որ ապեց օրինակելի, հ-մաստալից կյանքով և օրինական հպարտություն է ներշնչում բոլոր ապ-ռողներին:

Օրինություն և փա՛ռը նրա լուսավոր ու անմեր հիշատակին:

## ՀՈՎԱՐԱՐՁՈՒՄԵՐԻ ԽՈՐՀՈՒԴ

Քոլոր ականատես - մասնակիցները հիշում են, որ 1988 թ. վաղ գարնանը Երևանի թատրոնական հրապարակում, որ հետո վերանվանվեց Ազատության հրապարակ, մի քանի հարյուր հազ-

րանց, անգամ միլիոնանց ցույցեր էին կազմակերպվում: Դա հանուն Արցախի վերադարձման մեր ժողովրդի միասնական պահանջատիրության բարձրագույն արտայատությունն էր, որ Մոսկ-

վայի հանձնակատարներ Դոլգիխն ու Լուկյանովը վերին ցուցումով որակեցին որպես «մի խումբ ծայրահեղականների խանակություն»: Այս, գրեթե ողջ հայ ժողովրդին համարեցին ...ծայրահեղա-

կաներ:

Իր հիմանաց «Զապորոժեցով» տասնյակ կիլոմետրեր կտրելով՝ Հոկտեմբերյան Նալբանդյան գյուղից ամեն օր Երևան էր հասնում Եղիշ քերին: Գրեթե բոլոր մասնակիցները նրան ճանաչում էին, որովհետև բեղավոր ծերունին այդ օրերի քարոզիչներին իր հաստատող կամ մերժող վճռական խոսքով, վեր բարձրացրած բռունքով ու արտահայտիչ հայացքով կարծես մեր միջնավոր գոհերի խոսքն էր մարմնավորում և իր ներկայությամբ կարծես հնարավոր էր դարձնում պատմական արդարության վերականգնումը: Բայց հայոց արդար պահանջին թշնամին արձագանքեց Սումգայիթի ողբերգությամբ, Բաքվի, Գյանջա-Կիրովարադի և աղբեժանի մյուս բնակավայրերի հայերի ջարդով ու տեղահանությամբ: Ավելին. նա չիանդուրժեց արցախահայության Հայաստանին միանալու հանրաքենով Ադրբեյջանի կազմից դուրս գալով Հայաստանին միանալու օրինական կամարտահայտությունը, հարձակվեց Արցախի ու Հայաստանի Վրա, սակայն իր պարտադրած պատերազմում ինքը պարտվեց:

Հենց Ազատության հրապարակից մարդիկ մեկնեցին պատերազմ՝ ով ինչով կարող էր գինվելով, իսկ թշնամին գինված էր կասպան ռազմանավերից ու մոտոհրածագային դիվիզիաներից բռնազված տանկերով ու տարբեր գինատեսակներով:

Իր բնօրրան հայրենիքը՝ Մուշը կորցրած Եղիշ քերին նոյնական ռազմաձական մեկնեց Արցախի ազատագրության կրիվներում ու բաղկցեց Եռաբլուրի պանթեոնում: Պատերազմ մեկնեցին նաև Եղիշ քեռու զավակները՝ Հովհաննես և Վալերի Դարբինյանները:

Զարմանալի ժողովուրդ ենք մենք. ինչ անուն կամ մականուն ասես չենք գործածում: Եվ հազարամյակների ընթացքում այդ անուն-մականունների խայտարդեսության մեջ միջյանց կրկնող անունները քիչ են: Կան «գողական» մականուններ, որոնք ինչ-ինչ իրադրություններում ու միջավայրերում պարծենալու և «հեղինակության» համար են, կան և մականուններ, որ մեզ տվել է մեր դարավոր թշնամին, ինչպես աշուղ Ֆահրասի հայտնի «Սենք անկեղծ գինվոր ենք» երգում էասվում.

Դուշմանը մեզ տվեց ջանքեղա անուն,  
Այդ անվան համեմատ տեսակ գորություն...

Ամիրածշտ դեպքում ու ժամանակներում ինքներս ենք մեզ անվա-

նակոչել Արյութ Մհեր, Գայլ Վահան, Ղժոխ Հրայր, Արծիվ Պետո, Ասկոլիկա /Թենոր/ Աշոտ, Ցուլ Գագոր և այլն:

Երբեմն էլ մեզ անվանել ենք այնպես, որ թշնամու համար ընկալելի և սարսափելի լինի: Այս բացառիկ դեպքում է, որ ունենք անվան կրկնություն՝ Դուշման՝ թշնամի. այսինքն՝ Դուշման Վարդան Ստեփանյան և Դուշման Հովհաննես Դարբինյան:

Երկու Դուշման, երկու թշնամի, բայց ո՞ւմ համար: Երկուսն էլ, ինչպես Եր. Օսյանը կասեր, հույս էին յուրայինների և սարսափ թշնամիների համար: Առաջինը բազում հաղթական մարտերից հետո գոհվեց Շուշիի ազատագրման ժամանակ և փառաբանվեց լեգենդար նալով, երկրորդը հերոսացավ՝ արժանանալով «հրեղեն գնդակի համբույրին», վիրավորվեց ու ...ողջ մնաց:

Առաջինի մասին շատ է խոսվել ու գրվել: Երկրորդ Դուշմանը՝ Հովհաննես Դարբինյանը, 1969 թ. մարտի 23-ին ծընվել է ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղում՝ Եղիշ քեռու թնտանիքում և ստացել նախ նրա դաստիարակությունը: Հովհաննեմերյանի գյուղատնտեսական տեխնիկումում ուսումնական թղթաքաղաքացիության 1987-88 թթ. ծառայել խորհրդային բանակում Խարկովի մարզի Մալինովկա գյուղում: Զորացրվելով՝ շարունակել է ուսումնական ինստիտուտում՝ 1990 թվականից արցախյան ազատագրական շարժմանը: «Սև հովազ» հասուկ գնդի կազմում նա իրականացրել է բազմաթիվ մարտական հաղթական գործողություններ, և այս մեջ առաջատար է աշխատավոր կազմությունը՝ Հայաստանի կազմությունը՝ կազմակերպությունը՝ ՀՀ Արմավիրի մարզի ուսումնական կենտրոնում վաշտի հրամանատար էր, իսկ 1999-ից՝ Ն զորամասում լեյտենանտի կոչումով (հիմա հավանաբար բարձրացած կլիինին գինվորական կոչումն ու պաշտոնը) գումարտակում դասակի հրամանատար է իր ռազմական գիտելիքներն ու փորձն է հաղորդում հայոց բանակի գինվորների նոր հերթափոխներին:

Պատերազմական օրերից Դուշմանը շատ հիշողություններ ունի, բայց հիշում է առավել հետաքրքիր մի դրվագ. «1994 թ ես ծանր վիրավորվել էի գլխից: Իսձ բերել էին սուն.- պատմել է նա ընկերներին:

– Վիճակս շատ ծանր էր: Արամիկս

նոր էր սկսել խոսել: Երբ նրան հարցրել են՝ «Ի՞նչ ես դաշնայլու», որդիս պատասխանել է. «Բժիշկ պիտի դաշնամ, որպեսզի բուժեմ հայրիկիս և նրա նման վիրավոր գինվորներին»:

«Այնպես եմ ուզում, որ.- շարունակել է նա,- որդիս խկական գինվորական լինի, բժիշկ դաշնա ու բուժի գինվորականներին: Այնպես եմ ուզում, որ նա լինի արժանի ժառանգործը իմ նշանավոր ու փառավոր ուղի անցած պատիս, մեր տոհմի, մեր տառապանքի և հպարտության ակոսած ուղին ամուր պահի և իր սիրանքներով փառավորի մեր պայծառ տոհմացյուղի պատմությունը»:

Կրոյն՝ սա հենց Եղիշ քեռու դաստիարակության փոխանցմանը չէ ներկա ու գալիք սերունդներին, որ նոյնական ընտանեկան ու դպրոցական դաստիարակության և ավագների խորհրդների կարիք ունեն:

Օդազու էր քերի Եղիշի երկրորդ որդին՝ Վալերին: Սա էլ հայրենիքի նվիրյալ գինվոր էր, պատերազմական դժվարին օրերին իրականացրել էր բազմաթիվ կարելի և անկարելի, թույլատրելի և անթույլատրելի թշչքներ դեպի Արցախ, որոնք ճակատագրական նշանակություն ունեին մեր գինվորների և արհասարակ ազատամարտի հաղթական եթիք:



Դուշմանը և գինվոր Արամիկը 2005 թ.

J

համար: Սակայն հաջողությունները, ցավոք, մշտական չեն լինում: Վալերին մի օր էլ գոհվեց հերթական թշչքի ժամանակ Ոջազի հրամանատար էր իր ռազմական գիտելիքներն ու փորձն է հաղորդում հայոց բանակի գինվորների նոր հերթափոխներին:

Ընդհատվեց մի մատաղ կյանք, որ ազգային արտուրում հերոսացած բազմա-  
հայոց աշխարհում ապրեն բազում թիվ հայորդիներ:

Կյանքեր: Ահա ինչ է նշանակում Եղիշ  
քեզու դաստիարակություն, որին հե-  
տևեցին նրա զավակներն ու արցախյան

րդ համարի նյութերում Ռուշանի և նրա  
օդաչու Եղիշը՝ Վալերիի վերաբերյալ  
տեղեկությունները: – Խմբ.:

Սույն հոդվածում օգտագործվել են  
ըստ «Ժուրնալիստ» թերթի 2005 թ. 21-

## ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂՈՒՄ ԱՄՐԱՆԱԼՈՎ

Սիրիական ճգնաժամը ծանր հարված է մեր հայրենակիցների համար: Հայահօծ ծաղկուն գաղտր ունեցող երկրում, ուր բնավորված հայերն իրենց աշխարհաշեն գործն են անում, ունեն բարեկեցիկ վիճակ, ապրում են տնտեսական ու մշակութային բուրուն կյանքով, պատերազմը հրահրվում է թթական իշխանության երի կողմից Մեծ Եղեռնի հետևանքով հայրենագործ դարձած հայությանը՝ պահանջատերերի զավակներին ու նրանց շառավիղներին նորից տարհանելու և իրենց ոճրագործության հետքերը վերացնելու անսրող նկրտումներով: Թուրքերի կողմից հայերի ցեղասպանությունը 100 տարի հետո էլ շարունակվում է, և այդ ոճրագործ պետությունը, ցավոք, այսօր էլ ունի համակիրներ ու հովանավորներ և առավելագույն օգտվում է անպատճենիությունից: Հետևանքը տիտուր է ու ողբերգական: Սիրիայի պետական հովանու ներքո հայերը մայրաքաղաք Դամասկոսում, Հայեաում, Կամճշիլում և այլուր տուն ու տեղ էին դրել, հոգերու, մշա-

կութային, կըրթական ու բարեգործական հաստատությունների հիմնել, իսկ այսօր այդ ամենը լքելու ու հեռանալը շատերը պիտի համարեն մեծ հաջողություն: Նորից բանություն, ջարդ ու տեղահանություն, աշխարհի ճամփաներ ու անորոշություն...

Առավել ողջամիտները Հայաստան են գալիս: Չնայած սուր պայմաններին՝ այստեղ նրան ընդառաջում են ամեն ինչով. տուն, աշխատանք, հնարավոր կենսապայմաններ, ընդհուպ մինչև Աշտարակի հարևանությամբ առանձին բնակավայրի կառուցում: Շատերն էլ Արցախ են մեկնում մշտական բնակության, տնավորվում Բերձորում, Կովսականում, Եշիանանձորում և այլուր: Բերձորի վարչակազմը 30 սիրիահայ ընտանիքների, նրանց տրամադրել է ժամանակավոր կացարաններ, նույնիսկ Բերձորի հյուրատունը, մինչ նրանց համար բնակարանների կառուցման ավարտը: Նրանցից մեկը՝ Կամիշլիից եկած Սերոբ Պողոսյանը, հայրենի հողի վրա ինքն է կառուցում իր տունը::

- Մասնագիտությամբ էլեկտրիկ են, ասում է Ս. Պողոսյանը, - աշխատում են Բերձորի էլեկտրականությունը: Ինձի համար խորը չեն նաև գյուղական աշխատանքները. ծառեր ու բուսական մշակություններ սիրում են, նարդու վարպետին՝ Գուրգեն Մելիքյանի ծառերն են ջրում, ինձ հասկացված հողն են մշակում, տուն են կառուցում: Երբ կառուցումն ավարտեմ, իսկ դա դեռ երկու տարի կտկի, որովհետև մենակ են աշխատում, օգնու չունիմ: Տան շինարարությունն ավարտեմ, ապրելու տեղ ունենամ ծնողներս պիտի գան: Ով ուր կուտք թող եղաք: Աս է մեր հայրենիքը, մե՞ր հողի վրա պիտի ամրանանք, որովհետև կը հասկնամ ուրիշ տեղ մենք ապագա չունիմք:

Այլևս հետդարձի ճամփան չկա ինձի համար, պիտի հարատևենք հայրենի հողին վրա ամրանալով, - մեր գրուցի ժամանակ ասաց Բակունցի ազնիվ ջրվոր Լար Մարգարին հիշեցնող կամըշլեցի Սերոբ Պողոսյանը:

## ՀԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԽԵԱ «ԿՈՎԵՐ» ԾՐԱԳՐԻ

	Ազգանուն, անուն	բնակ. վայրը	Երես. թիվը	Խովերի թիվը	հովանավորները	.ականջի N
249	Մարգարյան Սուսաննա /միայնակ մայր/	ք. Բերձոր	4	կով 1	Վահագն Սահմեսի Հակոբյանց /Գերմանիա/	352092
250	Սահակյան Վահրամ Բաղրամյան Աննա	ք. Բերձոր	4	կով 1	Մարիամ Ավագյան /Հովանելիա/	325093
251	Ամիրիսանյան Վեներա Հայրապետյան Վայերի	գ. Գողթանիկ	8	կով 1	Ռաֆֆ Թումանյան (ԱՄՆ)	385097
252	Ավանեսյան Արտյոն Խարզյան Աստիկ	ք. Բերձոր	4	կով 1	Ուլքեն Գյուղօյան (ԱՄՆ)	325094
253	Աբրահամյան Լուիսնե Ավագյան Արամ	գ. Գողթանիկ	6	կով 1	Վահեմիք Ամիրիսանյան ընտանիք (ԱՄՆ)	325095
254	Սարգսյան Գայանե Ավեքսանյան Գեղամ	գ. Գողթանիկ	5	կով 1	Քրիստ Վարդանյան ընտանիք (ԱՄՆ)	315004

### Հարունակելի

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթալի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին» կրկնակի վճարում կատարած հովանավորների ցուցակ\*

հ/հ	Ազգանուն , անուն	Գումարի չափը	Օգնության նպատակը	Մուծման ամսաթիվ I	Մուծման ամսաթիվ II
1.	Բաբաջանյան Մասիս	300 \$	Օգնություն	07.12.2012 122 250 դր	12.03.2013 121 800 դր
2.	Մալոյան Էֆիկ և Լևոն	100 \$	Օգնություն	07.12.2012 40 690 դր	12.03.2013 40 600 դր
3.	Վարդանյան Սուրեն և Օլգա	105 \$	Օգնություն	07.12.2012 42 525 դր	08.02.2013 42 630 դր
4.	Սահակյան Աննիկ	50 \$	Օգնություն	07.12.2012 20 300	12.03.2013 20 300
5.	Շահբաղյան Գառնիկ, Լեյլա և Շարիս	500 \$	Օգնություն	07.12.2012 203 500	12.03.2013 202 750 դր

6.	Գալստանյան Արթուր	150 \$	Օգնություն	07.12.2012 60 900	12.03.2013 60 900
7.	Եղյան Արտաշես և Հասմիկ	400 \$	Օգնություն	07.12.2012 163 000 դր	12.03.2013 162 000 դր
8.	Կրիսեյան Հակոբ	200 \$	Օգնություն	07.12.2012 81 200	12.03.2013 81 600
9.	Գյուրջյան Ռուբեն	600 \$	Օգնություն	02.03. 2013 231 700 դր	14. 08. 2013 235 298 դր

\* Նախկին հաշվապահի մեղքով կատարվել եմ կրկնակի վճարումներ, որի համար հայցում ենք նվիրատուների ներողանությունը և խնդրում, եթե հնարավոր է, նորից մուժել հիշյալ գումարները: Նվիրատուները կատանան կրկնակի մուծումների երկու փաստաթղթերն էլ: ՀՈՎԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ներքոիշյալ հովանավորների անունները ցավալիորեն ներառված չեն ցուցակում /վճարման կտրոնները առկա են/

հ/հ	Ազգանուն , անուն	Գումարի չափը	Օգնության նպատակը	Սուծման ամսաթիվ
1.	Մարատ Գրիգորյան	120 000 դր	Օգնություն	22.07.2013
2.	Sheila Papayans	1250\$, 520 625	Օգնություն	21.05.2013
3.	Զին Սոուրզ ՄՊԸ	280 000	Օգնություն	30.07.2013
4.	Dr. Seht Shahbabian	100 \$, 40 600	Օգնություն	07.12.2012
5.	Rouben Issakhanian	100 \$, 40 600	Օգնություն	07.12.2012
6.	Khachik and Alis Aloyan	100\$, 40 600	Օգնություն	07.12.2012
7.	Valadien Avanessian	100 \$	Օգնություն	07.12.2012
8.	Siranush Yegiants	100 \$	Օգնություն	07.12.2012
9.	Elizabeth Mardoyan	100 \$	Օգնություն	07.12.2012
10.	Harry Haroutunian	100 \$	Օգնություն	07.12.2012
11.	Jaques Altiparmakian	1 340 000	Օգնություն	19.07.2013
12.	Ալվան ՓԲԸ	300 000	Օգնություն	07.07.2013
13.	Վահագն Մերյան	100\$, 40 700	Օգնություն	07.12.2012
14.	Դաֆֆի Թումանյան	203 000	ԽԵԱ	12.09.2013
15.	Վահագն Մահտեսի Հակոբյանց	243 000	ԽԵԱ	28.08.2013
16.	Ալեք Բաղդասարյան	345 620	Նկարների ծր.	02.08.2013
17.	Մարիամ Ավագյան	250 000	ԽԵԱ	24.08.2013
18.	Կիրակոս Գյուղումյան	3000\$, 1 221 000	Օգնություն	20.08.2013
19.	Հակոբ Թումանյան և Իրինա Մովսիսյան	40 000	Օգնություն	29.08.2013
20.	Հակոբ և Մարի Ալտիպարմարյան	100 000	Օգնություն	13.08.2013
21.	Զորյ Ավիշյան	2000\$, 820 600	Օգնություն	18.07.2013
22.	SCN կազմակերպ. Կարինե Արուլյան	61 400	Նկարահանումների համար	12.07.2013
23.	Boroian Rafik	203 500	Ուսման ծրագիր	14.08.2013
24.	Pac Fill NCL	200\$	Օգնություն	07.12.2012
25.	ՀՀ կառ. Առոնքեր պետ եկամուտ. Կոմիտե	228 210	Օգնություն	15.07.2013

#### Համարի նյութերը, շարկածքը, լուսանկարները և ծևավորումը՝ Ս. Մուրադյանի:

##### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒԹՅ

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ. գլխ. Խմբագիր, բան. գիտ. դ-ր, պրոֆեսոր

ԱՐԾՈՒԽ ԱՎԱԳՅԱՆ, բան. գիտ. դ-ր, պրոֆեսոր

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ, բան. գիտ. թեկն., պրոֆեսոր

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՖԱՐՅԱՆ, պատմ. գիտ. թեկն., պրոֆեսոր

Խմբագրության հասցեն՝ Երևան, 375025, Աբովյան 52 ա, հայ

բանավորության ֆակուլտետի մասնաշենք, 215 սենյակ:

Հեռ 54-43-91+1-18, բջջ. 055-52-29-36, 55-25-37: Տպ. 99: